ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ
համայնք, 6Փ. 47, Արարատի մարզ գ. Այնթապ 6-րդ փողոց
թիվ 47 շենք, Հեռ. (0236) 6-05-06 , Ayntap_hamaynq@mail.ru

N 185
04 հուլիս 2014թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հնրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքում հուլիսի 2-ին համայնքի ղեկավարը ներկայացրեց հաշվետվություն կատարված աշխատանքների մասին , որին մասնավորապես մասնակցում էին համայնքի բնակիչները, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները, երկու դպրոցների ուսուցչական կոլեկտիվների ներկայացուցիչներ, համայնքի բուժամբուլատորիայի աշխատակազմը, Հայ փոստ բաժանմունքի աշխատակիցները և այլ պաշտոնատար անձիք:

Լսումների ժամանակ համայնքի ղեկավար Կ. Սարգսյանը ամփոփեց 2013 թվականի տարեկան արդյունքները՝ կատարողականը եղել է 103,0 % և ներկայացրեց 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակի համար եկամուտների գծով կատարողականը եղել է 100%:

- Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1.585.000 դրամի ֆինանսական օգնություն:
- Համայնքի ուսանողների համար բյուջեից փոխանցվել է 1.085.000 դրամ:
- Հիվանդների համար փոխանցվել է 945.000 դրամ:
- Հունվարի 28-ին նշվել է հայոց բանակի կազմավորման 22 ամյակը՝ հուշարձանին և խաչքարին դրվել են ծաղկեպսակներ:
- Փետրվարի 13-ին մեծ շուքով նշվել է տյարնընդառաջը:
- Մարտին նշվել է գարնան և մայրության տոնը:
- Ապրիլի 18-ին Այնթապի ինքնապաշտպանության օրը ծաղկեպսակներ են դրվել հուշարձանին, հյուրընկալվել են հին այնթապցիները և կազմակերպվել է տոնական համերգ:
- Ապրիլի 24-ին դրվել են ծաղկեպսակներ կազմակերպվել է հիշատակի օրը:
- Մայիսի 9-ին մեծ շուքով նշվել է հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը՝զինվորական քայլերգով դրվել են ծաղկեպսակներ, հնչել են հայրենասիրակն երգեր և ՀՄՊ-ի վետերաններին,ազատամարտիկներին, զոհվածների այրիներին տրվել են դրամական պարգևներ:
- Մայիսին համայնքի ղեկավարի բարձր հովանու ներքո մսուր-մանկապարտեզում կազմակերպվել և նշվել է համբարձման տոնը:
- Համայնքի ղեկավարի ուղերձով սկսվել է երեխաների պաշտպանության միջազգային օրվա միջոցառումը, անցկացվել է կավճանկարի մրցույթ, որից հետո մսուր-մանկապարտեզի և 2

դպրոցների երեխաներին տրվել են պաղպաղակներ և նվերներ, մանկապարտեզում շարունակվել է տոնախմբությունը մուլտհերոսների մասնակցությամբ:

- Համայնքում տեղադրվել են կանգառներ՝ բյուջեից ծախսվել է 2.500.000 ՀՀ դրամ:
- Գյուղապետարանի համար ձեռք է բերվել ծառայողական մեքենա՝ 10.300.000 ՀՀ դրամ:

Մյուս կիսամյակում նախատեսվում է ձեռք բերել մսուր-մանկապարտեզի խաղահրապարակի համար գույք , փողոցների արտաքին լուսավորություն, փողոցների մասնակի ասֆալտապատում, մշակույթի տան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում, նոր թաղամասերի գազաֆիկացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. աշխատակազմի քարտուղար՝ Կ. Արզումանյան
0236-6-05-06